ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

Դպրոցական ծախքեր։ Պրուսական դպրոցը 1856-է ցուցակնդէտում։ Ժողովրդական դպրոցները։ Իրմեազիաներ և պրոգիմնազիաներ։ Ուսուցչական դպրոցներ։ Աղջկայն ուղղութիւն։ Ընդհանուր տարրական ուսում։ Կիրակնօրեայ ուսումնարաններ։ Ցաբավարժարաններ։ Զեռագիտական-արհեստագիտական յաբավարժարաններ։ Եկեղեցական խոստովանողական դպրոցներ։ Համալարժարաններ։ Պետական մասնաւոր դպրոցներ և քաղաքային դպրոցներ։ Արէնքներ դպրոցի շինութեան համար։ Դասարանների թիւը ժողովրդական դպրոցներում։ Հասակը աշակերտների։ Ուսուցման առարկաները ժողովրդական ուսումնարաններում։ Ուսուցիչների ռոճիկը։ Դպրոցների կառավարութիւնը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ ՄԻՆՉԵՒ ՊԵՍՏԱԼՈՑՅԻ

Ճշմարի՛տ Պրուսիան մեծ գործ կատարեց. երբ եկեղեցին, հակառակ իւր հիմնադրի լաւիտենական և միակ գլխապետի սկզբան, փոխանակ իւր միակ պաշտօնը կատարելու, այն է՝ ուսուցանելու և կրթելու ըստ աւետարանի Քրիստոսից իրան յանձնուած ժողովուրդը, աշխարհակալութեան յետևից ընկաւ, նա կորցրեց արդէն կաթոլիկական աշխարհում իւր հեղինակութիւնը. այնուհետև այդ գործը, պետութեան խնամածութեան ներքոյ, յանձնուեց ժողովրդին, ընդհանին պետութիւնը, մաքառելով պապերի և նոցա նզովքների դէմ, վերջապէս իւր պտուղները տուեց։ Պրուսիան միջոց չը խնայեց կրթական գործին համար և այդ նրան յաջողեց, որ ակներև տեսնելու համար բաւական է ի նկատի ունենալ այն համեմատական ծախ-

---

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի № 4. 5.

քերն, որ ունեցան, օրինակ 1874 թուականին զանազան պետութիւններ. Պրուսիային զալիս է 4%, Բելգիային 3,5%, Ռուսասանին 2,4%, Իտալիային 1,4%։ Ուշագրաւ է մանաւանդ Մանիրի՝ Եւրոպայի ընդհանուր տգիտութեան ցուցակն, ըստ որում ամենատգէտն են—Ռուսասանը, Լեհասանը, Վալլախիայ, Սպանիայ, Պորտուգալիայ։ Ռուսասանում լուսաւորուածները 1000-ին չորս են գալիս, Բրիտանիայում Բելգիայում և Ֆրանսիայում 50%։ ամենալուսաւորուածներն են Զուիցարիայ, Հոլլանդիայ, Դանեմարկ, Նորվեգիայ, Սուէդիայ և Գերմանիայ։ Եւրոպայի 3/4 մասը դեռ խաւար է։ Սակայն այժմ արևմտեան Եւրոպայի քանի մի մասերում, ինչպէս Գերմանիայում, Ֆրանսիայում հազիւ թէ անգրագետ անձն գտնի։

Պրուսիայի գործունէութեան ընդհանրը նկատելի էր պարզապէս Պարիզի 1856-ի ցուցահանդիսում Մարսեան դաշտում տրուած ցուցադրութիւններից։ Ամերիկական, նորվեգական, ֆրանսիական բազմատեսակ զէնքերը, չքեղազարդ, հրաշագործ և ճարտարապետական շինութիւնների շարքում դրած էր կատարեալ պրուսական խղճուկ ուսումնարան՝ իբրև պրուսական ազգային ճարտարագործութիւն։ Մի՞թէ այդ տնակը չի ներկայացնում պրուսական և նոյն իսկ գերմանական պետութեան քաղաքական, հասարակական, ընկերական և բարոյական դաղափարներն իրանց նշանակական մարմնաւորութեան մէջ։ Մի տնակ—հաղարաւոր դաղափարների նշանակ, բիւրաւոր գործառնութիւնների գրդիռ և հիմնաքար...։

Պրուսիան դորանով ասաց, որ հոգևոր բարիքները նշանաւորագոյն աղբիւրներն են ազգային ինքնաճանաչութեան և բարոյա-կրօնական ոյժերի, և որ պետութեան անհրաժեշտ են հոգևոր բարիքներն այնպէս, որպէս հարկերն ու զինուորները։

Ընդհանրապէս ուսումնարանական դրութիւնը Պրուսիայում չատ բարեբաստ է. բարձրագոյն ուսումնավայրերի համար պատրաստող դպրոցները՝ գիմնազիաներն և պրոգիմնազիաները, նաև բէալական ուսումնարաններն են, որոնց ծախքերը պետութեան և համայնքների հոգալով խորին նախանձախնդրութեան մէջ են։ Ժողովրդական դպրոցներն ունին իրանց հիմնադրական բարձր նշանակութիւնը. դոքա են բարեհիւսում և զարգացնում բարոյա-ընկերական սկզբունքները. դոքա են, որոնք հիմքեր են տալիս և կրթում են, ընդունակ և ձեռնհաս դարձնելով ապագայ կոչման և ընդհանուր լուսաւորութեան։ Ըստ այդմ ժողովրդական դպրոցներն են նախապատրաստութիւն ամենայն զարգացման կամ լաւագոյն ասած, առաջին բաղրատնին, որից միայն կանոնաւորապէս կարելի է բարձրանալ ամենաբերին լարկերը։ Այսպիսով նա ամբողջ զարգացողական գործի հիմնաւոր մասն է կազմում, նա մատակարարում է հոգևոր բարիքներ, որոնք ազնուացնում են ամբողջ ազգը և բարձրացնում մարդկային արժանիքը ժողովրդի ամենաստորին խաւերում։ Երբ մի դպրոց իւր կանոնաւոր շրջանառութեան մէջ է մտնում, նա արդէն հաստատապէս ձեռն-

հաս է և պատրաստ իւր աշակերտների հայեցողութիւնները վարժել, իրաւանց և պարտեաց զգացումը, բարուն, վայելչին, օգտակարին և կարեորի ճանաչողութիւնը զարթեցնել և թարմացնել. իսկ երբ նա այդ պարտականութիւնը լիովին կատարեց—բարին ու ճշմարիտը, գեղեցիկ և օգտաւէտը դուրս կը բղխեն ինքեանք ըստ ինքեանց և ժողովրդի բարօրութեան կը ծառայեն։ Հէնց այդպէս ժողովրդական դպրոցները, որպէս և ամենայն ուսումնավայր, աշակերտներին մարդ կը դարձնէ, մարդ պետութեան, մարդ ազգի, մարդ համայնքի մէջ և իսկոյին այդ է՝ «նորա պատիւը, իրաւունքը և խնդիրը»։ Նկատելի է որ ժողովրդական դպրոցները ձեւակարգութեամբ և նիւթապէս երկսայրի պէտք է լինին զգալարանական լարաբերութեամբ և կապ ունենալով բարձրագոյն ուսման և կեանքի հետ՝ իբրև միջնորդ երկուքին էլ ծառայելով։ Նորա ձեւակարգութիւնն է դասարանական կարգը, որի ճշմարիտ կանոնաւորութիւնից է կախուած խնդրի նիւթաւորապէս լուծելը։ Դպրոցի այդ խնդրի ձեռնհասութիւնն ևս կախուած է ուսուցչակարգութիւնից և վարժապետների զարգացումից. և դոքա են ուսուցման էութեան չափը (Շտայն)։

Ահա 1882 թւականին Պրուսիայում դպրոցին այդ միջոցը տալու գործունէութեան մէջ էին 100 դպրոցներ, 64-ը բողոքական, 27 հռոմէական ուսուցիչների և 6—վարժուհիների, որոցում մինչև 1872 թիւը չատ սահմանափակ ուղղութիւն էին տալիս, ըստ որում վարժապետները լոկ գոց անել տալով, կաչկանդում էին աշակերտների մտքերը։ Պատմում են որ այդ ժամանակներում եղել են, մանաւանդ Հռենոսեան երկրում և Վեստֆալում դպրոցներ, որոնցում աննեբելի սխալներ էին անում թէ գեղագրական և թէ ուղղագրական։

1872 թւականից յետոյ ուսումը սաանում է այստեղ զուտ ազգային ուղղութիւն, որի նիւթն էր նախ մայրենի լեզուն, ապա պատմութիւնն ու հայրենագիտութիւնը, որոնց ուսուցումը թէ բերանացի և թէ պատկերներով, կեանքի գոյներով և ճշմարտութեամբ աշխոյժ և խանդ (էնտուզիազմ) էին յառաջացնում աշակերտների մատաղ սրտերում. «ինչպէս կարող է պատանին չ'ուզենալ իրազեկ լինել այն տեղեկութիւններին, առանց վրճռական ձգտման այնպիսի հայրերին և հայրենիքին արժանի լինելու։ Արդ, եթէ մեր պատանեկութեան առջև գերմանական լեզուն և իմաստութիւնը բոհեմական գիւղեր չեն, այլ եթէ նա գերմաներէն գիտէ, սիրում է և երգում է և գերմանական պատմութիւնը զրոյցներից սկսած մինչև այժմեան օրաթերթը ճանաչում է և ըստ արժանեաց դատում է, այն ժամանակ դպրոցը բացած է բարեաց ազգային զարգացման առատածորանը։ Այնժամանակ առայս են գալիս սիրոյ վարժութիւնն, որ կարող է ազգային ոգով յառաջանալ»։ Ահա այդ է ազգային ուսման հիմունքները ըստ Բիլօի (Համագիտարան Շմիտի)։

Պրուսիան պսակեց իւր գործը և թէև նա առաջնորդ էր և խթան

պետութեան միւս մասերին, սակայն կային վայրեր, որտեղ դեռ անտանելիութիւնը կոկող ուրագի չէր ենթարկուել։ Այդ ուրագն է ընդհանուր տարրական ուսումն, որ վերջապէս մտաւ ամենայն անկիւններ։

Որքան յառաջադիմութիւնը յաջողութիւն է ունենում, այնքան աւելի նորանոր պահանջումներ են երևան ելնում։ Արդ, գերմանացիք ոգևորութեամբ յառաջ տանելով ուսումն և գիտութիւնը, տարածելով ազգային կրթութեան գաղափարը, զարկ տուին նաև սկզբնական կրթավայրին այն է՝ մանկապարտէզին ըստ Ֆրեօբելի թէ զոքա են ապահովագոյն միջոցներ, ճշմարիտ ճանապարհ և պարզագոյն ձևը իսկական ընտանեկան կեանքի ամենայն դրութեանց և յարաբերութեանց մէջ ընդհանրապէս բարձրացման և ազնուացման, մեկին կատարելութեան և պատկերացման՝ իբրև ճշմարիտ աղբիւր անհատական ճշգրիտ կեանքի, ուրախալիր ժողովրդի և մարդկային կենցաղավարութեան»։

Միւս կողմից նկատուած էր որ պարտադիր ուսումը ժողովրդի մէջ սրտակցութիւն չէ գտնում. ծնողներին իրանց որդոց ուղարկում էին ուսումնարան, վասն զի պարտաւոր էին, ըստ որում 14 տարեկանի հասած երեխան արդէն ազատ էր թողնւում ուսումից և այդպիսով կրթութիւնը խեղդւում էր իբրև վաղահաս ցանք փշերի մէջ։ Դորանից խուս տալու համար էր որ անցեալ դարու կէսին երևեցան կիրակնօրեայ ուսումնարաններ, որոնք պէտք է շարունակէին ժողովրդականի մատակարարածը։ Դոքա տարածեցին Անգլիայ, այլ և Ամերիկայ որտեղ զուտ եկեղեցական կնրպարան ստացան։ Այդպիսի ուսումնարաններ, որոնք կոչւում են նաև տօնադպրոց, կրկնութեանց դպրոց և այն եղան Բերլինում և ապա տարածւեցին և գոյութիւն ունին այժմ ևս։ Այդտեղ պիտի դնան 16—18 տարեկան պատանիներն, որոնք դուրս են եկած ժողովրդական դպրոցներից։ «Նորա նպատակն է, ըստ Սաքսոնիայի դպրոցական օրէնքների, մասամբ կրկնումն, հաստատումն և մտապնդումն առաջուայ սովորածին, մասամբ ծաւալումն դպրոցական ուսուցմով ձեռք բերուած գիտելութիւնների, որոնք մանկական դպրոցներում սակաւ կամ տակաւին կարող էին անուշադիր մնալ։ Նոյնը հաստատում են և այլ մանկավարժներ, որոնք նկատել են որ երեխաները դպրոցը թողնելուց յետոյ յանձնւում են արհեստի, ըստ որում մարմինը զարգացնելով, հոգևոր զարգացումը աչքաթող է լինում և բոլորովին անհետանում. «երևի այդ է այն հիմքը, ասում է Նիմայէր, որից հիները արհեստի զբաղմունքն անարժան էին համարում ազատ մարդուն»։ Այս հիմունքով են գոյութիւն առել յարավարժարանները (Fortbildungsschulen), որոնք կան Բագենում 1754 թւից, Պրուսիայում 1763-ից, Վիւրտեմբերգում 1795-ից, Բաւարիայում 1803-ից։ Իսկ օրինապէս մտցրուած են Աւստրիայում, Բաւարիայում, Կոբուրգ-Գոթայում, Կուրհեսսենում, Նասսաուում և այլ ուրեք, որտեղ պարտադիր է և յաճախումը։ Շաբաթական մի քանի (2—3) ժամեր նուիրել այդ լաւ գործին մեծ բան չէ, բայց

դորանով մանկան ձեռք բերած հողեկան հարստութիւններն անկորուստ են դառնում, կատարելագործւում են և բարոյական շնորհքներին վարժւում կեանքի ալեկոծ հոսանքի մէջ նետւած անօդնական պատանիները։ «Ոչ մի խելօք կառավարութիւն, ասում է Նիմայեր, չի կարող դորա դէմ հակաճառել. նա պէտք է ինքն խոստովանի դորա մէջ բարոյականութեան լառաջավարելու միջոց»։

Այդ ուսումնարաններում ուսուցանում են նոյն առարկաները, որ անցնում են ժողովրդական դպրոցներում, միայն թէ գործնական կեանքին լարմարեցրած։ Քաղաքներում դլխաւոր տեղն են բռնում չափել, հաշուել, կաղմագիտական (մեխանիկ) հիմքեր և այլն, իսկ գիւղերում դիւղատնտեսական դիտելիքներ։

Ցարավարժարաններ երևացին նաև վաճառականների համար, որտեղ առևտրական հմտութիւններն են դլխաւոր տեղը բռնում։ Շտուտգարտի այսպիսի լարավարժարանը տալիս է առաւօտեան և երեկոյեան դասեր (մօտ 8—9 ժամ ամռան, 8—9 ամառը ընդամենը 36 ժամ տարին), աւանդելով գերմաներէն, ֆրանսերէն և անդլիերէն, առևտրական նամակագրութիւն, հաշիւ և գեղագրութիւն։ Աւելի ընդարձակ և մանրամասն հասակաւոր աշակերտներին—բարձր դասընթացքում։

Չափազանց մեծ տարածումն ունեցան ձեռագիտական լարավարժարանները, որոնց թիւը Պրուսիայում 1854-ին 220-ի էր հասել 18.000 աշակերտներով. գրել, հաշուել, երկրաչափական, պատմական, բնական ուսմունքների, օրինագիտական, հաշուապահական, ձեռագիտական (Gewerbe) դասեր էին այդ վարժարանների զբաղմունքը։ Դոցա կազմակերպութիւնը զանազան դաւառներում զանազանակերպ էին։ Դոցա օգտաւէտութիւնը այնքան աչքի ընկաւ, որ մի քանի տեղեր դիւղատնտեսական միութիւնները (verein) նորանոր մտքերի ելան և հիմնեցին դիւղատնտեսարաններ գեղջուկ պատանիների համար, որոնք ուսման առաւելագոյն կարօտութիւն ունէին, վասն զի գիւղական դպրոցները միայն մի դասարան ունէին, ընդհանրն և բանդէտ վարժապետները միշտ դիմում էին քաղաքներ։ Իսկ ձեռագիտական լարավարժարանները այնպէս զարդացան, որ 1869-ին օրէնք հրատարակեց Պրուսիայում, պարտադրելով վարպետների օգնականներին և սկսնակներին մինչև 18 տարեհասակը լաճախելու տեղական լարավարժարաններն, ըստ որում և արհեստապետները պարտաւոր էին դորա համար ժամանակ տալու. պետութիւնն ևս իւր կողմից դրամանպաստ է տալիս նրանց, որոնք որոշեալ պայմաններում են գտնւում կազմակերպութեան, ուսումնապարտութեան և այլն նկատմամբ։ Ի հարկէ այդ «շնորհարանները» միայն այնքան նշանակութիւն ունին, որ, ինչպէս ասացինք, նախ վարժեցնում և չարունակում են ուսածը և երկրորդ՝ տալիս են արհեստի տարրական ընդհանուր շնորհքներ կամ ձեռնավարժութիւններ։ Մի քանի դժւարութիւններ, որոնք ներկայանում են բոլոր դաւառներում,

աշակերտների անհաւասար մտակերպութիւնն է, ժամանակի կամ ժամերի անհամապատասխանութիւնը, վասն զի միայն ազատ ժամերին կարող են աշակերտներն իրանց գործից հեռանալ, կարգապահական միջոցների պակասութիւնը, համեմատելով միւս ուսումնարաններին և ուսուցչի շնորհը, որ ամենայն վարժապետի հարստութիւնը չէ։ Սակայն դոքա, այսինքն այդ յարավարժարանները չեն պատրաստում կատարեալ մասնագէտներ, այլ հաշուելու, չափելու, փորձնական և բնական մասնագիտութիւնների ընդհանուր անհրաժեշտ հիմքերի վարժութիւններ, արհեստների կարևոր ձեռնաջողութիւններ են տալիս, քայլ առ քայլ առաջ գնալով, բայց ոչ բանակարգօրէն (սիստեմատիկապէս)։ Սոցա հետ և մարմնամարզական աշխատանքներն ամրացնում են պատանիների հոգեկան զօրութիւնները, ըստ որում այդ ամենը կարող են իրաւամբ արդի մշակութեան (կուլտուրա) զարգացման և ծաւալման հիմնակէտը համարուել։

Որպէս զի մեր գրութիւնը կատարեալ հասկանալի լինի ընթերցողներին և մանաւանդ որ Գերմանիայի դպրոցական աշխարհը պատկերանալ նորա առաջ, մի ընդհանուր հայեացք ձգենք այդ դպրոցների վերայ։ Սկզբնական դպրոցները ժողովրդական տարրական ուսումնարաններն են, որոնք տալիս են հիմնական ուսումն. իսկ որ և է կոչումն ստանալու ձգտողների համար նշանակուած են զանազան արհեստանոցներ և մասնադիտարաններ, որպիսիք են՝ առևտրական, ճարտարապետական, դիւղատնական, անտառային, ըէալական և այլն, նոյնպէս ուսուցչանոցներ, նկարչանոցներ, երաժշտանոցներ և այլ այնպիսի դպրոցներ, որոնք պատրաստում են աշակերտներին զանազան կոչումների համար, ըստ որում դոքա միջին տեղը բռնելով ժողովրդական դպրոցների և բարձրագոյն՝ համալսարանների միջև, համարուում են միջնակարգ դպրոցներ։

Համալսարաններն ևս կարող են կոչման դպրոցներ անուանուել, վասն զի այնտեղ ևս պատրաստուում են իրաւաբաններ, հոգևորականներ, բժիշկներ, մասնագէտ ուսուցիչներ՝ ուսողներ, բնագէտներ և այլն, ըստ որում գիմնազիաներն են նոցա նախապատրաստարանները։

Ժողովրդական դպրոցների շրջանում նկատուում են տեսակներ՝ ըստ սեռի, կրօնի տարբերութեան, նա և աղատ և ոչ աղատ։

«Իւրաքանչիւր մարդու համար ամենաթանդագին և ամենաբարձր տեղն է բռնում իւր սեփական կրօնը», ուստի ամենայն համալնք, ամենայն ժողովուրդ, ամենայն ազգ սրբազան պարտականութիւն է համարում և ամենայն ջանք ու ճիգ թափում է իւր որդիներին նոյն կրօնը ուսուցանելու, նոյն հաւատքը նորա սրտի մէջ ներշնչելու, որպէս զի նոքա հոգևպէս միակիս լինին իրանց, ըստ որում և իւրաքանչիւր ծնող աշխատում է այնպիսի ուսումնարանի դիմել, որի կրօնական հոգատարութեան հաւատ ընծայել կարողանալ։ Իսկ ժողովրդական դպրոցները մի տեսակ mixta causa լինելով՝ ծառայում են նախապէս և դլխաւորապէս եկեղե-

ցուն, բայց միւս կողմից չեն կարում աշակերտներին կեանքի պահանջներից, այլ աշխատում են, ըստ կարելոյն նոցա ապագայ կեանքին նախապատրաստել, մանաւանդ որ եկեղեցի և կեանք անջատ չեն իրարից և առանց միմիանց անհասկանալի են։ Ժողովուրդն ևս կամենում է անհրաժեշտաբար իւր տարրական (ծխական) ուսումնարանները ունենալ, վասն զի միջնակարգ դպրոցներում, թէև կրօնը իշխող է, սակայն մասնագիտական առարկաները գերակշռող են հանդիսանում։

Գերմանիայում կան քրիստոնէական դպրոցներ և ոչ քրիստոնէական, այն է միայն լուդալական։ Քրիստոնէական դպրոցների մէջ զանազանւում են՝ աւետարանական և կաթոլիկականը. [1]) աւետարանականներն, ևս բաժանւում են լութերեան, վերանորոգած, միացած և այլն (roformirte, unirte) եկեղեցիների դպրոցների։ Կաթոլիկականի մէջ նկատելի են՝ հռոմէական-կաթոլիկական, լունա-կաթոլիկական և գերմանա-կաթոլիկական։ Մի որ և է կրօնի պատկանող դպրոցը կոչւում է նաև «խոստովանողական» (confessionelle). կան տեղեր, ինչպէս Սաքսոնիայում և այլ ուրեք, որտեղ իշխող է մի կրօն, ըստ որում օրէնքով թոյլատրւած է միւս կրօնի քրիստոնէաներին յաճախել, միայն առանց կրօնի դասատուութեան, որ պէտք է ծնողները մասնաւորապէս հոգան ըստ իրանց կրօնին։ Կամ թէ երբեմն զանազան պարագաներից ստիպւած մինչև 12 տարեկանը ուսանում են և կրօնը. սակայն այս շատ հաղւադէպ է։

Կան դպրոցներ, որոնք կոչւում են «համալարժարաններ» (Communal կամ Simultanschule), ուր կարող են յաճախել ամենայն կրօնի պատկանողներ առանց խտրութեան. այս հաստատւած է մի տեսակ աղդայնացնելու սկզբունքի վերայ։

Պետական դպրոցները կոչւում են նաև աղատ դպրոցներ. կան նաև ոչ աղատ, այն է մասնաւոր դպրոցներ, որոնք պահւում են մի քանի ընտանիքների միացած ուժերով։ Ըստ տեղւոյն՝ կան քաղաքային դպրոցներ, որոնց մէջ կան՝ ստորին և բարձր տեսակներ։ Սաքսոնիայում ժողովրդական դպրոցներն են՝ պարզ, միջին և բարձր դպրոցներ. միջին և բարձր ժողովրդական դպրոցները ունին և տեսուչ։

Զնոք վիշում այլ ևս չքաւորների, որբերի, կուրերի, խուլերի, և այլն դպրոցները։

Դպրոցի շինութեան համար ևս կան օրէնքներ. Սաքսոնիայում դրպրոցը պէտք է լուսաւոր լինի և իւրաքանչիւր աշակերտի համար 2,55 խորանարդ տեղ դասարանում, Պրուսիայում 0,6 քառակուսի մետր. օրէնքի տակ են նոյնպէս պատշաճ կահկարասիները, որոնք պէտք է հոդացին։

---

[1]) Կաթոլիկական պէտք է հասկանալ նորադաւանները՝ հակառակ. այսինքն չվերանորոգւած եկեղեցիները. այս բառը կիրարկւում է դեռ. ը-դ դարում։

Ս յստակ Հայոց եկեղեցին ևս անուանում են Հայ-կաթոլիկական (armeno-katholisch), որ հռոմէական չէ նշանակում։

Ժողովրդական դպրոցները տարբերվում են դասարանների թվով. կան մէկ, երկու, երեք, չորս և շատ դասարաններով դպրոց. Սաքսոնիայում գիւղական դպրոցը պարտաւոր է ամենանուազը 2 դասարան ունենալ— ստորին և վերին դասարան. ստորին դասարանը պարապմունք ունի ճաշից վերջ, իսկ վերին դասարանը ճաշից առաջ. շաբաթը մի անգամ կամ երկու անգամ երկուքն էլ գալիս են ճաշից առաջ։ Պրուսիայում կան նաև միդասեան դպրոցներ, որոնք շատ սակաւ են, միայն 3 բաժանմունքով, խառն հասակաւորներով առաջինները ունին 20 դաս շաբաթական, իսկ վերջինները 30, վասն զի մարմնամարզութիւն (և ձեռագործութիւն օրիորդաց համար) աւելանում են։ 8 դասարանից աւելի դասարան ունեցող ժողովրդական դպրոց չը կայ։ Լինում են զուգընթաց դասարաններ։

6—15 տարեկանը տղայոց համար և 6—14՝ օրիորդաց ուսման պարտաւորիչ ժամանակն է։ Գիւղերում 140 աշակերտներից աւելանալուց վերջ, դպրոցը պէտք է մի ուսուցիչ ևս ունենալ (Kothen)։ Անհալտ-Դեսսաու-Կեօթենում ուսուցման առարկաներն են՝ սրբազան պատմութիւն, կրօն, կարդալ, գրել, մտքի և լիշողութեան վարժութիւն, թուաբանութիւն, ուղղագրութիւն, մայրենի լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական ուսմունքներ և երգեցողութիւն. մնացեալ մանրամասնութիւնները վերաթողում են տեղական հանգամանքներին։ Ուսուցիչներ նշանակում են ուսուցչանոցը աւարտածներից. ուսուցչանոց բնդունում են գիմնազիայ աւարտողները և ստանում են դրամական օգնութիւն և բնակարան. ուսուցչանոցի ուսումը շարունակում է 3 տարի։ Գիւղական դպրոցներում և քաղաքային ստորին ուսումնարաններում ուսուցիչը ստանում է ամենանուազը 200 տալեր (ըստ այժմեան թուղթ դրամագնին 240 ռ. չափ), բացի եկեղեցում ծառայելու՝ 200—500 տալեր. կառավարիչները ստանում են ուսուցչի համար նշանակուած ամենամեծ գումարը (500 տ. կամ մօտ 700 բուբլի)։

Դպրոցները կառավարում են դպրոցական խորհրդի միջոցով, իսկ հսկողութիւնը անմիջապէս դաւառական վերահասուների ձեռքումն է, որոնք ընտրում են դպրոցական գործին տեղեակ անձերից և տարին երկու անգամ վերահասու լինելով դպրոցների դրութեան, յայտագրում են վերին իշխանութեան։

Ժողովրդի կողմից ընտրում են 3 հոգաբարձուներ. դպրոցական գործի անմիջական վերահսկութիւնը պատկանում է 2 կամ 3 յառաջավարների (նախագահ), որոնք ընտրում կամ նշանակում են վերին իշխանութիւնից։

Կրօնի դասատուութեան հսկողութիւնը պատկանում է իւրաքանչիւր տեղի հոգևորական վարչութեան։

Անհալտ-Դեսսաու-Կեօթենի այս կանոնադրութիւնը շատ մեծ ուրախութեամբ քաջալերուել է ամբողջ Գերմանիայում, որի նման կազմուել են միւս ազգ դքսութիւնների օրէնքները։ Հարկաւ իւրաքանչիւր պետութիւն

աչքի առաջ ունի իւր երկրի տեղային հանդամանքներն և պահանջները։

Մենք խոյս ենք տալիս պետական կամ ուսումնական դպրոցների վերաբերեալ խօսելուց, ըստ որում մեր գրութեան նպատակն ու նիւթն են ժողովրդական դպրոցները։ Այդ դպրոցների դրութեան ընդհանուր պատկերը տալուց յետոյ, անցնենք այժմ նոցա ներքին վիճակին, որը գլխաւոր ցուցանշանն է նոցա էութիւնը հասկանալու համար. ընդ նմին և մի օրինակ է գերմանացիներին ճանաչելու համար, ըստ Ֆիւլ Սիմոնին, որ ասում է՝ «այն ժողովուրդն որ ունի ամենալաւ դպրոցներ, առաջին ժողովուրդնէ. եթէ այդ այսօր չէ, այդ կը լինի անշուշտ վաղը»։

(Կը շարունակուի)